մեր հոգիների փրկության համար՝ եկեղեցուն տվինք Կոնթեղուտը, որ Սուրբ Կարապետի ժառանգությունն էր: Մեծածախս հնձաններ շինեցինք, շինեցինք արծաթյա ոսկեպատ քշոցներ: Իսկ այս սրբի սպասավորները՝ տեր Համազասպը և այլ եղբայրներ խոստացան տարին տասներկու ժամ Անդրե Առաքյալի տոնին վեցը ինձ՝ վարդապետիս համար, վեցը Մխիթարիչին (պատարագ մատուցել): Արդ, եթե առաջնորդներից կամ պարոններից որևէ մեկը խլել ջանա մեր՝ եկեղեցուն տված ընծաները, նզովվի այդ մարդը Աստծուց, երեք սուրբ ժողովներից և մեր ամբողջ ազգի մեղքերին պարտական լինի ահեղ դատաստանին: Գրությունս կատարողները թող Աստծու կողմից օրհնվեն, իսկ ով խափանի, թող Տիրոջից դատվի:

Տաճարում հարավային որմը

Յոթ հարյուր երեսուներկու (1283) թվին բարերար Աստծու կամքով իշխանաց իշխան Քրտի և մոր՝ Խորիշահի, որ Մամիկոնյան տոհմից էր, որդի Հասան Իշխանը՝ մեծ Վաչեի թոռը և իմ բարեպաշտ կին Արուս Խաթունը՝ Ուքանանց տոհմից անժամանակ և կես տարիքով ելանք այս աշխարհից, ավանդեցինք մեր հոգիները, մեր և մեր հարազատ եղբայր աստվածասեր Դավթի ժառանգությունն ու զավակները Աստծու սիրո և մեր հոգիների փրկության համար տվինք Սուրբ Կարապետին: Ես և իմ Դավիթ եղբայրը գանձով գնված Վահրամագեղ գյուղը և Ղամազանցը իրենց բոլոր հող ու ջրով, բնիկ մարդկանցով, Կարբիի մեր գնած ու մեր ձեռատունկ այգին, Բաբկենց փոսը, Որցկանը, որ եկեղեցու սեփական ժառանգությունն էր, ժամանակի չար ու դառն բերմունքով վանքից ելել էր, ծանր չարչարանքով ու մեծ ծախսերով վերադարձրինք Սուրբ ուխտին: Ընծայեցինք նաև ոսկով ու արծաթով զարդարված պահարան:

Իսկ Սուրբ ուխտի առաջնորդ տեր Համազասպը և եղբայրները որոշեցին կատարել մեր հիշատակը՝ մի քառասունք անգամ հանուն մեզ պատարագել Քրիստոսին՝ քսանը Հասանի համար, քսանը Արուս Խաթունի:

Արդ, եթե թագավորներից ու իշխաններից որևէ մեկը՝ մերոնցից կամ օտարներից, որևէ պատճառով ջանա հանել մեր հիշատակը Սուրբ Կարապետից ամբողջ վերոգրյալը, այն մարդը ամենասուրբ Երրորդության, երեք սուրբ ժողովների և բոլոր սրբերի կողմից նզովվի:

Տաճարում ավազանի վերևը

Յոթ հարյուր քառասունինը (1300) թվին Բարերար Աստծու շնորհիվ, ես Հեճուպ Դավիթս՝ Հոնայի որդին, Ալվեցխի թոռը և իմ կինը Նանան՝ Տուտիկի դուստրը, դեպի Աստված մեր ունեցած սիրո համար վերստին Սուրբ Կարապետում հաստատեցինք մեր հայրերի միաբանությունը: Մեր հոգիների փրկության համար Ջորագեղի շինությանը տվինք շինական Ավետիսին՝ մականունով Կոնկիկ: Արինք նաև այլ օգուտներ: Վանքի առաջնորդ տեր Համազասպը և այլ եղբայրներ խոստացան պատարագել հանուն մեզ տարեկան վեց պատարագ Կոստանդիանոս թագավորի տոնին, չորսը՝ Հեճուպին, երկուսը՝ Նանային: Քանի կենդանի ենք, թող հարցնեն Խոնային և Գելին: Աշխարհից մեր ելնելուց հետո մեր անունով թող կատարեն անխափան: Գրությանս կատարողները թող օրհնվեն Աստծուց, իսկ խափանողները՝ թող դատվեն Քրիստոսից, ամեն:

Գավիթում հյուսիսային որմին

Ութ հարյուր յոթանասունչորս (1325) թվին անմահ Աստծու կամքով, ես՝ Զաքարիաս, Գամրիկելի, պարոն Ազիզբեկի որդու թոռս, գնեցի Մուղնի[193] գյուղը իմ արդար արդյունքով: Սուրբ Գեորգի եկամուտը Սուրբ Կարապետին էր պատկանում, իմ բաժինն էլ տվի այս Կարապետին իմ և իմ ծնողների հիշատակի համար: Եթե մեկը խափանել ջանա, մեր մեղքերին պարտական լինի:

Տաճարում ավագ խորանի որմին

Ութ հարյուր յոթանասունվեց (1427) թվին Բարերար Աստծու շնորհներով, ես՝ օտարական վարդապետ Սիմոնս, ընծայեցի իմ նորաստեղծ Հայսմավուրքը այս Սուրբ Կարապետին իմ հոգու փրկության ու հանցանքների քավության համար: Քանի իմ այս գիրքը կա, մշտապես այս թող կարդան եկեղեցում*, մեզ հիշեն Քրիստոսով՝ իմ հույսով, իրենց աղոթքներում:

* Արձանագրությունն ունի նաև՝ *որք կարդան զգիրքս և զարձանս, երկրպագեն Սուրբ նշանիս, և չունի ոք իշխանություն, որ զգիրս հանէ Վանիցս, և որք յանդգնին, դատին յԱստուծոյ, ամէն*, տե՛ս ռուսերեն հրատարակության 251 էջը: